

Ապահովել ենք սեփական եկամուտների հավաքագրման աննախադեպ ցուցանիշ՝ 23%-ով ավելի, քան անցած տարի. Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանի ասուլիսը /05.04.2018/

Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանը 8 ամիս է, ինչ պաշտոնավարում է: Ապրիլի 6-ին նա լրագրողներին ներկայացրեց 8 ամիսների ընթացքում մարզում կատարած աշխատանքները, մարզային կյանքի խնդիրները և առաջիկա ծրագրերը:

Սիմոնյանն ասաց, որ այս ընթացքում փորձել են կառավարության կողմից որդեգրված՝ մարզերի, տարածքների հավասարաչափ զարգացման, մարզի 2017-2025 թթ. երկարաժամկետ ռազմավարության և մարզի տարեկան աշխատանքային ծրագրերով նախատեսված գործառույթներն իրականացնել:

Նա նշեց, որ մարզում առկա խնդիրները բազմաբնույթ են, և իրականացնում են այդ խնդիրների լուծմանը միտված ծրագրեր: «2017 թվականին բավական դրական տեղաշարժեր կան՝ շատ ցուցանիշների առումով: „Մենք 2017-ին մարզում ապահովեցինք սեփական եկամուտների հավաքագրման աննախադեպ ցուցանիշ, որը, 2016-ի համեմատ, մոտ 23 տոկոսով ավելի է: Շատ լավ գիտակցելով և կարևորելով սեփական եկամուտների հավաքագրման ու արդյունավետ ծախսման գործընթացը համայնքային տեղական բյուջեներում՝ մենք կարևորեցինք այդ աշխատանքը, արդյունքը գոհացուցիչ է: Բարեփոխումների և մեր հետագա աշխատանքների ընթացքն ավելի արդյունավետ դարձնելու համար մի շարք ոլորտներում որդեգրել և ունեցել ենք հստակ ձևակերպված ծրագրեր, որոնք ներառեցինք 2018 թվականի աշխատանքային գործունեության մեջ», - ասաց Սիմոնյանը:

Մարզպետի խոսքով՝ ոլորտներում առկա խնդիրների լուծման համար մարզպետարանն ունի իր հստակ պատկերացումները: «Այդ պատկերացումները թղթին հանձնելով՝ փորձելու ենք քայլ առ քայլ իրականացնել և լուծել այն խնդիրները, որոնք

տարիներ շարունակ, կախված տարբեր հանգամանքներից, տարածքային կառավարման ամբողջ համակարգում առկա են եղել»,- ասաց նա:

Սիմոնյանը նշեց, որ գլոբալ առումով մոտեցումը այն է, որ եթե ՀՀ-ն որդեգրել է առաջանցիկ տեմպերով զարգացման ուղին, այդ ուղու մեջ պետք է դերակատարություն ունենա նաև մարզը, համայնքը: «Գաղափարը հիմնականում սա է, որ տարածքները պետք է հավասարաչափ զարգանան, որպեսզի ՀՀ-ն չունենա գերկենտրոնացված մայրաքաղաք, որտեղ կենտրոնացված է արդյունաբերության, առևտրի, շինարարության զգալի մասը, կենտրոնացված է նաև ՀՆԱ-ի գերակշիռ մասը: Մարզերը պետք է ևս հավասարաչափ զարգանան՝ ապահովելով հավասարության, աղքատության, տարբեր տիպի սոցիալական խնդիրների լուծում»,- ասաց նա:

Մարզպետը տեղեկացրեց, որ մարզի արտադրանքի՝ առանձին ճյուղերում մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի տեսակարար կշիռը մոտ 2,3 անգամ ավելի է, քան հանրապետական միջին ցուցանիշը: «Շինարարության ոլորտում, համեմատած 2016 թվականի հետ, բավականին տեղաշարժ կա, այդ ցուցանիշը մոտ 1.4 անգամ գերազանցում է հանրապետական միջին ցուցանիշը՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի հաշվով: Ե՛վ շինարարության, և՛ գյուղատնտեսության մեջ մենք ՀՆԱ-ում ևս 2017-ին՝ առաջինի դեպքում մոտ 4.2%-ով, իսկ գյուղատնտեսության ոլորտում մոտ 8% ՀՆԱ-ում աճ ունենք արձանագրած»,- ասաց նա և հավելեփց, որ 2018-ի համար դրել են ավելի բարձր նշանոց:

Սիմոնյանի խոսքով՝ եթե 2017 թվականին մասնավոր հատվածից մոտ 22.5 մլրդ դրամի ներդրում եղավ մարզի ընդհանուր տնտեսության մեջ, ապա 2018 թվականի աշխատանքային պլանում այդ թիվը կկազմի 45 մլրդ դրամ, այնսինքն՝ թիվը պետք է կրկնապատկեն:

«Կարող եմ ասել՝ ֆինանս հայթայթելը մեզ մոտ խնդիրներից թիվ մեկը չէ, թիվ մեկ խնդիրը մրցունակ, ժամանակակից պահանջներին համապատասխան, հստակ հիմնավորված ներդրումային ծրագիր ներկայացնելն է՝ քիչ, թե շատ ընդունելի տոկոսաչափով, շահաբաժին ապահովող հստակ ներդրումային ծրագրեր իրականացնելն է: Եթե գյուղատնտեսության, զբոսաշրջության, քաղաքաշինության, ցանկացած բնագավառում ունենանք հստակ ձևակերպված, թղթին հանձնված ծրագիր, տեսլական, որը տնտեսական

առումով հիմնավորված է, ֆինանսավորում, ներդրում գտնելն ավելի հեշտ խնդիր կլինի, և պետք է ուղիները հասկանալ, թե որտեղ են ներդրումներ պահանջվում»,- նշեց մարզպետը:

Աշոտ Սիմոնյանն անդրադարձավ մարզում տարբեր ոլորտների զարգացմանը: Նա խոսեց գյուղատնտեսության, աղբահանության, ճանապարհաշինության, զբաղվածության խնդիրների մասին:

Նրա խոսքով՝ Արագածոտնը գյուղատնտեսական մարզ է, և մարզի համախառն ներքին արտադրանքի 30 տոկոսը բաժին է ընկնում գյուղատնտեսական արտադրանքին: «Ավելին՝ Հայաստանի պտղի 50 տոկոսն Արագածոտնի մարզում է արտադրվում, ներդրումների գերակշիռ մասը գյուղատնտեսության ոլորտում է հենց իրականացվում»,- ասաց մարզպետը:

Ըստ նրա՝ կառավարության ծրագրի համաձայն, 2017-ին մոտ 32 հա ժամանակակից ինտենսիվ այգի է հիմնվել, ինչի համար մոտ 3,2 մլրդ դրամի ներդրում է կատարվել: «2018 թվականի ծրագրով 120 հա այդպիսի այգի պետք է հիմնենք, որից 32 հա-ն այս պահին ամբողջությամբ պատրաստ է, մնացած մոտ 100 հա-ի վրա կատարվում են նախնական աշխատանքներ՝ աշնանը պատրաստ լինելու համար»,- տեղեկացրեց Սիմոնյանը:

Անդրադառնալով աղբահանության խնդիրներին՝ նա ասաց, որ 2017-ի սկզբին մարզում գործել է 136 աղբավայր: «Հիմա մենք ունենք 11 գործող աղբավայր: 2017 թվականին աղբահանության վրա ծախսել ենք մոտ 145 մլն դրամ: Աղբահանության և սանիտարական մաքրման համար հավաքագրել ենք 45 մլն դրամ: Աշխարհում չկա մի երկիր, որտեղ աղբահանությունը պետության կողմից իրականացվող ֆունկցիա լինի, դա վճարովի ծառայություն է: Դրել ենք աղբահանության գանձման մեխանիզմ և այս տարի ապահովելու ենք 100% ինքնաձախտումով աղբահանություն»,- ասաց մարզպետը, ապա հավելեց, որ ֆինանս ունենալը, տեխնիկա ունենալը և աղբահանություն իրականացնելը մեկ բան է, այլ բան՝ երբ քաղաքացին գիտակցի՝ չի կարելի փողոցը կեղտոտել:

Սիմոնյանը նաև ասաց, որ Իրանի ՀՅԴ կառույցից օգնության կարգով տրամադրելու են աղբահանության 3-4 միլի մեքենաներ:

Ինչ վերաբերում է ճանապարհային խնդիրներին, ապա մարզպետը նշեց, որ երեք տեղ կա մարզում, որ ճանապարհները ծայրահեղ վատ վիճակում են, երեքն էլ՝ Ապարանի տարածքում: «Ճանապարհները 30 տարուց ավելի վերանորոգված չեն: Մեր՝ 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի մեջ ներառել ենք, բայց այս տարվա բյուջեով 3 ճանապարհները բարենորոգելու հնարավորություն չունենք, դա ոչ թե մի քանի միլիոնի ծախս պահանջող ծրագրեր են, այլ միլիարդը գերազանցող: Քննարկում ենք այլընտրանքային եղանակներով միջհամայնքային ճանապարհների վերանորոգման հարցը: Այս տարի կլուծենք մեկ ճանապարհի խնդիր, որը Թալինում է: Ասիական զարգացման բանկի կողմից արդեն ֆինանսավորվում է: Մրցույթները շահող կա, աշխատանքներն այնտեղ սկսվել են: Նշված երեքի խնդիրները կփորձենք լուծել 2019 կամ 2020 թվականներին», - նշեց նա:

Նա ընդգծեց, որ ամենակարևորը զբաղվածության խնդրի լուծումն է, որի ուղղությամբ էլ են աշխատանքներ տարվում: «Օրինակ՝ Թալինում ունեցել ենք ադամանդի վերամշակման գործարան, որը ապահովել է շուրջ 1000 աշխատատեղ: Այդ գործարանն ամբողջությամբ պահպանված է, սարքավորումները տեղում են: Այստեղ ադամանդի հումքը Հայաստան բերելու խնդիր ունենք: Բանակցում ենք ռուսական ընկերության հետ, որը մեր տարածաշրջանում հումք մատակարարողն է: Նախնական պայմանավորվածության համաձայն՝ մինչև տարվա առաջին կեսը կունենանք այն խմբաքանակը, որը գոնե 2-3 հարյուր աշխատեղ կապահովի: Այսինքն՝ Թալինում 3 հարյուր աշխատատեղ ապահովող գործարան ենք վերագործարկում, դա բավականին լուրջ՝ զբաղվածություն լուծող ծրագիր է», - ասաց Սիմոնյանը:

Ըստ նրա՝ փորձում են նաև Ապարանում, Թալինում, Աշտարակում ստեղծել փոքր տեքստիլ գործարաններ: «Ներդրողի հետ բանակցում ենք Ապարանում անհատույց երկարաժամկետ օգտագործման տարածք տրամադրելու համար, որ նման արտադրություն հիմնի: Այդ ներդրողն արդեն Արթիկում նման արտադրություն հիմնել է: Քննարկել ենք, որ նույն գործարանը նաև Ապարանում հիմնվի, որով կլուծվի 3-4 հարյուր աշխատատեղի խնդիր», - ասաց Սիմոնյանը: